Հավելված 3

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԷԿՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ(ՕՖԵՐՏԱ)

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հասցե ՀՀ, ք. Երևան, 0006, Մանանդյան 33/3,
հեռ. 87-87, (+374 8000) 87-87 (արտասահմանից զանգելու դեպքում)
էլեկտրոնային հասցե՝ headoffice@vtb.am
Բանկի պաշտոնական կայք՝ www.vtb.am

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն սույն օֆերտան հասցեագրում է ցանկացած իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջը (առևտրի և սպասարկման կետեր), ով ցանկանում է օգտվել «ՎՏԲ–Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող Էկվայրինգի ծառայությանը:

Առևտրի և սպասարկման կետերում էկվայրինգի ծառայության տրամադրման և սպասարկման շրջանակում MIR վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասով Էկվայրինգ ծառայությունը մատուցվում է հետևյալ եղանակներով՝

1. Հղմամբ անցնելու միջոցով (E-commerce). ապրանքների և ծառայությունների դիմաց հղման ստացման միջոցով իրականացվող անկանխիկ վճարային տեխնոլոգիա, որը ստանալուն պես հաճախորդն ուղղորդվում է հարթակ, որտեղ լրացնում է իր բանկային քարտի տվյալները՝ համար, գործողության ժամկետ, քարտատիրոջ անուն և ազգանուն, CVV կոդ:
2. Ինտերնետ կայքի կամ հեռախոսային հավելվածի միջոցով ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար Առևտրի և սպասարկման կետի էջ մուտք գործելիս լրացնել բանկային քարտի տվյալները՝ համար, գործողության ժամկետ, քարտատիրոջ անուն և ազգանուն, CVV կոդ (Virtual POS):
3. Ֆիզիկական POS տերմինալի միջոցով. Նման վճարումը դիտարկվում է որպես անկանխիկ հաշվարկի արագ և անվտանգ եղանակ, որը ներառում է երեք հիմնական փուլ՝ գումարի մուտքագրում, քարտի հպում կամ տեղադրում և չեկի տպում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«MIR» -վճարային համակարգ, որն իրականացնում է վճարային գործարքների ծառայություն և թողարկում վճարային քարտեր,

Քարտ - վճարային գործիք, որը նախատեսված է քարտապանին պատկանող կամ բանկի կողմից տրամադրված դրամական միջոցների սահմաններում կանխիկացման և անկանխիկ գործառնություններ իրականացնելու համար,

Քարտապան – ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը Բանկի հետ կնքել է MIR վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր, ինչի հիման վրա կարող է կատարել MIR վճարային քարտերով գործարքներ,

Առևտրի և սպասարկման կետ (merchant) - առևտրի և/կամ ծառայությունների մատուցման կետ, որը վճարային քարտի սպասարկում իրականացնող բանկի հետ կնքել է պայմանագիր՝ իր կողմից վաճառվող

ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների դիմաց վճարային քարտը, որպես վճարամիջոց ընդունելու վերաբերյալ,

Էլեկտրոնային մատյան - քարտային համակարգի կանոնով և (կամ) այլ փաստաթղթով սահմանված ժամանակահատվածի համար վճարային քարտով իրականացված գործառնությունների ժամանակ բանկոմատի, POS տերմինալի կամ վճարային քարտ սպասարկող այլ տեխնիկական սարքավորման միջոցով ձևավորված էլեկտրոնային տեսքով փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն,

Անհատական նույնականացման համար (PIN կոդ) – Քարտ թողարկողի կողմից քարտապանին տրամադրված ծածկագիր, որը կիրառվում է քարտապանի կողմից քարտային համակարգի կանոններով նախատեսված դեպքերում,

Հավաստագրում (ավտորիզացիա) - թողարկողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման թույլտվության ստացման գործընթաց,

POS տերմինալ - էլեկտրոնային սարքավորում, որը Հավաստագրման կենտրոնին միանում է՝ Dial Up – ֆիքսված հեռախոսակապով, Ethernet – համացանցի կամ առանձնացված կապուղով, GPRS – բջջային կապի միջոցով և նախատեսված է Սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու համար: POS տերմինալ հասկացության տակ կարող է ներառվել նաև համապատասխան տեսակի հսկիչ դրամարկղային մեքենա, ինչը կարող է ադապտացվել Սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու համար,

3D Secure հավաստագրում (ավտորիզացիա) – Ինտերնետով կատարվող գործարքի ժամանակ քարտատիրոջ ճանաչման գործընթաց՝ վճարային համակարգի կանոններով իրագործվող,

Հավաստագրված էջ – Ինտերնետ միջավայրում բացված էջ, որը հնարավորություն է տալիս քարտատիրոջը կատարել գործարք՝ ինքնուրույն նշելով վճարային քարտի ռեկվիզիտները,

Հետվճարման գործարք – նախկինում կատարված գործարքի հետվճար/մասնակի հետվճար՝ նախաձեռնված Սպասարկման կետի կողմից, կապված քարտատիրոջ կողմից ապրանքի/ծառայության հետվերադարձի հետ,

CVV2/CVC2/CVP2 կոդ – հատուկ կոդ՝ տեղակայված Visa International Service Association/ MasterCard WorldWide և Միռ վճարային համակարգերի քարտերի վրա, որն օգտագործվում է հավաստագրման ժամանակ քարտատիրոջ նույնականացման համար,

Սույն փաստաթուղթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ ՝ Հայտ-Պայմանագրի կնքման վերաբերյալ հրապարակային օֆերտա: Սույն հրապարակային օֆերտայի բովանդակությունը տեղադրված և հրապարակված է Բանկի պաշտոնական կայքում հետևյալ հասցեով՝ https://www.vtb.am/am/business/acquiring:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ հաճախորդի կողմից սույն հրապարակային օֆերտայի ակցեպտի (ընդունման) միջոցով կնքված Հայտ-Պայմանագիրը համարվում է սույն հրապարակային օֆերտայի պայմանների հիման վրա գրավոր ձևով կնքված պայմանագիր և հանդիսանում է պայմանագրի երկու կողմերի կողմից փաստաթղթային ձևով կնքված պայմանագրին համարժեք: Սույն հրապարակային օֆերտայի ակցեպտի (ընդունման) միջոցով Հայտ-Պայմանագրի կնքումից հետո հաճախորդն իրավունք չունի ներկայացնել որևէ պատճառաբանություն օֆերտայի պայմաններին ծանոթ չլինելու և/կամ օֆերտայի պայմաններից որևէ մեկի և/կամ որևէ փաստաթղթի հետ համաձայն չլինելու վերաբերյալ և այդ հիմքերով իրավունք չունի վիճարկել Հայտ-Պայմանագրի կնքման փաստը և/կամ Հայտ-Պայմանագրի որևէ պայմանի կիրառելիությունը:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈՍ-ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

4.1 Կնքելով POS տերմինալների ստացման վերաբերյալ հանձնման-ընդունման ակտ Սպասարկման կետի գրանցման Հայտ-Պայմանագրում նշված հասցեում գտնվող կետում նախատեսել POS տերմինալների տեղադրման վայր՝ ապահովելով ֆիքսված, բջջային կամ ինտերնետ կապով և էլեկտրասնուցմամբ:

4.2. Սպասարկումը համարվում է ավարտված Հավաստագրման կենտրոնի կողմից հաստատում ստանալու և/կամ PIN կոդի պահանջի դեպքում՝ քարտապանի կողմից ճիշտ կոդի մուտքագրումը կատարելու դեպքում:

4.3. Պահպանել քարտերի սպասարկման անդորրագրերի պատճենները երեք տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման ամսաթվից, և հանձնել դրանք Բանկին՝ 5 աշխատանքային օրում վերջինիս պահանջով: Թողարկող բանկի կողմից գործարքի անդորրագրի պահանջի և/կամ Սպասարկման կետի անփութության կամ դիտավորյալ կատարված սխալի պատճառով, երբ տեղի է ունեցել վճարային քարտերի սպասարկման խախտում, Բանկին ներկայացված հետգանձման դեպքում, Սպասարկման կետը պարտավոր է ներկայացնել անդորրագիրը, իսկ վերջինիս բացակայության դեպքում հատուցել ծախսերը:

4.4 Քարտերով գործառնություններ կատարելու դեպքում օգտագործել սարքավորումներ (POS տերմինալ), որոնք տրամադրվել են Բանկի կողմից կամ հանդիսանում են Սպասարկման կետի սեփականությունը սակայն ստացել են Բանկի հավանությունը և նախատեսված են բացառապես քարտային գործարքները հավաստագրելու համար:

4.5. Օգտագործել Բանկից ստացված սարքավորումները, հումքային և գովազդային նյութերը բացառապես սույն Պայմաններով նախատեսված նպատակով:

4.6. Պահպանել Բանկի և Քարտապանների բանկային և առևտրային գաղտնիքը, որը հասանելի է դարձել Սպասարկման կետին սույն Պայմաններով նախատեսված պահանջների կատարման հետևանքով: Չձևափոխել և չտրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, իրավական փաստաթղթերը և այլ նյութերը:

4.7. Սպասարկման կետի մեղավորությամբ Բանկի սեփականությունը հանդիսացող POS տերմինալի կորստի, ինչպես նաև հասցված վնասի դեպքում, ինչը առաջ է բերել POS տերմինալի անսարքություն/անաշխատունակություն, Սպասարկման կետը Բանկի պահանջով 15 օրացուցային օրվա ընթացքում վճարում է տուգանք անակնկեպտ կարգով 100 000 ՀՀ դրամ գումարի չափով՝ Բանկի կողմից ներկայացված պահանջ/գրության հիման վրա: Սույն կետում նշված տուգանքը չի կիրառվում բնականոն մաշվածության դեպքերում:

4.8. Իրականացնել կետի իր աշխատակիցների (հետագայում նրանց փոփոխության դեպքում նաև նոր աշխատակիցների) POS տերմինալի հետ աշխատանքների ուսուցումը: Ծանոթացնել Սպասարկման կետի աշխատակիցներին Քարտերով հավաստագրման անցկացման գործընթացին:

4.9. Արգելվում է քարտերի մագնիսական ժապավենի և/կամ չիպի վրա եղած տեղեկատվությունը կարդալ, արտատպել/ձայնագրել և պահպանել այլ սարքավորումների կամ կրիչների միջոցով:

4.10 Սույն պայմաններով նախատեսված պարտականությունների կատարման խոչընդոտների ի հայտ գալու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին Բանկի պաշտոնական կայքում հրապարակված կապի միջոցներով https://www.vtb.am/:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԴՐԱՄՈՎ ԻՆՏԵՐՆԵՏ-ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

5.1 Սպասարկման կետի գրանցման Հայտ-Պայմանագրում նշված հասցեում գտնվող կետում ապահովել Բանկի հետ ֆիքսված, բջջային կամ ինտերնետ կապով և էլեկտրասնուցմամբ:

5.2. Պահպանել քարտերի սպասարկման էլեկտրոնային անդորրագրերը երեք տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման ամսաթվից, և տրամադրել դրանք Բանկին՝ 5 աշխատանքային օրում վերջինիս պահանջով: Թողարկող բանկի կողմից գործարքի անդորրագրի պահանջի և/կամ Սպասարկման կետի անփութության կամ դիտավորյալ կատարված սխալի պատճառով, երբ տեղի է ունեցել վճարային քարտերի սպասարկման խախտում, Բանկին ներկայացված հետգանձման դեպքում, Սպասարկման կետը պարտավոր է ներկայացնել էլեկտրոնային անդորրագիրը, իսկ վերջինիս բացակայության դեպքում հատուցել ծախսերը:

5.3. Սպասարկման կետն իրավունք չունի ինտերնետային կայքում քարտերով վճարվող գործարքների համար սահմանել հավելավճարներ և/կամ վճարման այլ պայմաններ:

5.4. Սպասարկման կետը իրավասու չէ տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքը անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին անկանխիկ եղանակով:

5.5. Սպասարկման կետը պարտավորվում է քարտերով կասկածելի կամ ոչ իրավաչափ գործարքների հայտնաբերման կամ նման կասկածի դեպքում անմիջապես հայտնել այդ մասին Բանկին:

5.6. Ինտերնետային կայքում հղումները պետք է լինեն իրական և պարունակեն իրական տվյալներ, ինչպես նաև չտղորդեն այլ կայքեր:

5.7. Օգտագործել Բանկից ստացված սարքավորումները, հումքային և գովազդային նյութերը բացառապես սույն պայմանագրով նախատեսված նպատակով:

5.8. Պահպանել Բանկի և Քարտապանների բանկային և առևտրային գաղտնիքը, որը հասանելի է դարձել Սպասարկման կետին սույն պայմանագրի կատարման հետևանքով: Չձևափոխել և չտրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, իրավական փաստաթղթերը և այլ նյութերը:

5.9. Սպասարկման կետի Ինտերնետ-խանութը չի կարող պարունակել այլ Ինտերնետ-խանութների URL-հասցեների հղումներ:

5.10. Սպասարկման կետի Ինտերնետ – խանութը չպետք է պարունակի ազդերիզներ, որոնք չեն համապատասխանում Սպասարկման կետի գործունեության յուրահատկություններին:

5.11. Ինտերնետ-խանութի բոլոր ներքին հղումները պետք է լինեն աշխատող և թարմացվող հարցումներով:

5.12. Սպասարկման կետի Ինտերնետ-խանութը չպետք է տեղակայված լինի անվճար սերվերներում, որոնք տրամադրում են հոսթինգի ծառայություն:

5.13. Քարտի կիրառմամբ վճարում կատարելիս թույլ չտալ ապրանքի գնի բարձրացում կանխիկ դրամական միջոցներով վճարում կատարվող գնի համեմատ, քարտատերերից հավելյալ միջնորդավճարների և վճարների գանձում:

5.14. Չպահպանել քարտերի ռեկվիզիտները մասամբ կամ ամբողջությամբ, որոնք հայտնի են դարձել Սպասարկման կետին էկվայրինգի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման արդյունքում:

5.15. Սպասարկել այնպիսի վճարային համակարգերի քարտեր, որոնց համար պահանջվում է 3D secure հավաստագրում և որոնց համար Ծառայության Պրոցեսինգային կենտրոնը ապահովում է 3D secure անվտանգություն:

5.16 Սույն Պայմաններով սահմանված պարտականությունների կատարման խոչընդոտների ի հայտ գալու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին Բանկի պաշտոնական կայքում հրապարակված կապի միջոցներով https://www.vtb.am/:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԴ ՌՈՒԲԼՈՎ ԻՆՏԵՐՆԵՏ-ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

6.1 Սպասարկման կետի գրանցման Հայտում նշված հասցեում գտնվող կետում ապահովել Բանկի հետ ֆիքսված, բջջային կամ ինտերնետ կապով և էլեկտրասնուցմամբ:

6.2. Պահպանել քարտերի սպասարկման էլեկտրոնային անդորրագրերը երեք տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման ամսաթվից, և տրամադրել դրանք Բանկին՝ 5 աշխատանքային օրում վերջինիս պահանջով: Թողարկող բանկի կողմից գործարքի անդորրագրի պահանջի և/կամ Սպասարկման կետի անփութության կամ դիտավորյալ կատարված սխալի պատճառով, երբ տեղի է ունեցել վճարային քարտերի սպասարկման խախտում, Բանկին ներկայացված ետգանձման դեպքում, Սպասարկման կետը պարտավոր է ներկայացնել էլեկտրոնային անդորրագիրը, իսկ վերջինիս բացակայության դեպքում հատուցել ծախսերը:

6.3. Սպասարկման կետն իրավունք չունի ինտերնետային կայքում քարտերով վճարվող գործարքների համար սահմանել հավելավճարներ և/կամ վճարման այլ պայմաններ:

6.4. Սպասարկման կետը իրավասու չէ տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքը անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին անկանխիկ եղանակով:

6.5. Սպասարկման կետը պարտավորվում է քարտերով կասկածելի կամ ոչ իրավաչափ գործարքների հայտնաբերման կամ նման կասկածի դեպքում անմիջապես հայտնել այդ մասին Բանկին:

6.6. Ինտերնետային կայքում հղումները պետք է լինեն իրական և պարունակեն իրական տվյալներ, ինչպես նաև չուղղորդեն այլ կայքեր:

6.7. Օգտագործել Բանկից ստացված սարքավորումները, հումքային և գովազդային նյութերը բացառապես սույն պայմանագրով նախատեսված նպատակով:

6.8. Պահպանել Բանկի և Քարտապանների բանկային և առևտրային գաղտնիքը, որը հասանելի է դարձել Սպասարկման կետին սույն պայմանագրի կատարման հետևանքով: Չձևափոխել և չտրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, իրավական փաստաթղթերը և այլ նյութերը:

6.9. Սպասարկման կետի Ինտերնետ-խանութը չի կարող պարունակել այլ Սպասարկման կետի Ինտերնետ-խանութի URL-հասցեների հղումներ:

6.10. Սպասարկման կետի Ինտերնետ – խանութը չպետք է պարունակի ազդերիզներ, որոնք չեն համապատասխանում Սպասարկման կետի գործունեության յուրահատկություններին:

6.11. Ինտերնետ-խանութի բոլոր ներքին հղումները պետք է լինեն աշխատող և թարմացվող հարցումներով:

6.12. Սպասարկման կետի Ինտերնետ-խանութը չպետք է տեղակայված լինի անվճար սերվերներում, որոնք տրամադրում են հոսթինգի ծառայություն:

6.13. Քարտի կիրառմամբ վճարում կատարելիս թույլ չտալ ապրանքի գնի բարձրացում կանխիկ դրամական միջոցներով վճարում կատարվող գնի համեմատ, քարտատերերից հավելյալ միջնորդավճարների և վճարների գանձում,

6.14. Չպահպանել քարտերի ռեկվիզիտները մասամբ կամ ամբողջությամբ, որոնք հայտնի են դարձել Սպասարկման կետին էկվայրինգի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման արդյունքում

6.15. Սպասարկել այնպիսի վճարային համակարգերի քարտեր, որոնց համար պահանջվում է 3D secure հավաստագրում և որոնց համար Ծառայության Պրոցեսինգային կենտրոնը ապահովում է 3D secure անվտանգություն:

6.16. Սպասարկման կետը պարտավորվում է գործարքը կատարելուց առաջ ապահովել հաճախորդի կողմից իր ոչ ռեզիդենտ լինելու կարգավիճակի հաստատումը: Ինտերնետ- էկվայրինգի դեպքում հաստատումը կարող է իրականացվել Սպասարկման կետի վեբ-էջում տեղադրված էլեկտրոնային հայտարարության (հարցի) միջոցով՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Ես հաստատում եմ, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չեմ հանիսանում»:

Վճարման իրականացումը ռեզիդենտ լինելու հաստատման (բացասական պատասխանի) դեպքում արգելվում է: Արտարժութային Ինտերնետ-էկվայրինգի միջոցով վճարումների ընդունումը թույլատրվում է բացառապես Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ քարտապաններից:

6.17 Սույն Պայմաններով սահմանված պարտականությունների կատարման խոչընդոտների ի հայտ գալու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին Բանկի պաշտոնական կայքում հրապարակված կապի միջոցներով https://www.vtb.am/:

ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Իրականացնել Սպասարկման կետի Հայտ-Պայմանագրում նշված հասցեում տեղակայված POS տերմինալների և Ինտերնետ-էկվայրինգի ծրագրային ապահովում, քարտերով կատարվող գործառնությունների շուրջօրյա հավաստագրում:

7.2. Սպասարկման կետին ապահովվել հումքային և գովազդային նյութերի մատակարարումը:

7.3.Ապահովել Քարտերով կատարված գործառնությունների գումարների փոխանցումը Սպասարկման կետին:

7.4. Սույն Պայմաններից բխող պարտավորությունների կատարման բերումով, պահպանել Բանկին հայտնի դարձած Սպասարկման կետի գործառնությունների գաղտնիությունը: Այդ տեղեկությունները կարող են

տրամադրվել երրորդ անձին միայն գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ համաձայն Բանկային գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի:

7□5 Ինտերնետ-էկվայրինգ ծառայության շրջանակում Բանկն ապահովում է Սպասարկման կետին վերջինիս ինտերնետային կայքի՝ քարտերով վճարումներ ընդունելու համար օգտագործվող մասի կառուցման և հետագա շահագործման համար անհրաժեշտ տեղեկություններով:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

8.1. Սույն Պայմաններով նախատեսված ժամկետներում ստանալ կատարված գործարքների դիմաց գումարը:

8.2. Սպասարկման կետը իրավունք ունի մերժել քարտի սպասարկումը, եթե քարտի ետնամասում բացակայում է քարտապանի ստորագրությունը կամ այն չի համընկնում գործարքի անդորագրի վրա կատարված ստորագրության հետ:

8.3□ Բանկից ստանալ սպասարկում կապ հաստատելով Պրոցեսինգային կենտրոնի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում պահանջել բանկի աշխատակցի այցելություն Սպասարկման կետ:

ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊՈՍ-ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

9.1. Սպասարկման կետից, Քարտերով կատարված գործառնությունների դիմաց, գանձել ծառայության համար նախատեսված միջնորդավճարը:

9.2. Փոփոխել Քարտերի սպասարկման դիմաց գանձվող միջնորդավճարը, այդ մասին գրավոր կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Սպասարկման կետին առնվազն 15 օրացուցային օր առաջ, նշելով նոր միջնորդավճարի չափը: Եթե սպասարկման կետը չի առարկում 15 օրացուցային օրվա ընթացքում, ապա պայմանները համարվում են ընդունված և ուժի մեջ են մտնում 16-րդ օրը 12:00-ից: Եթե միջնորդավճարի չափի փոփոխման օրվա ամսաթիվը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա միջնորդավճարի փոփոխությունը կատարվում է հաջորդ բանկային (աշխատանքային) օրը:

9.3 Սպասարկման կետի կողմից նոր միջնորդավճարի չափին համաձայն չլինելու դեպքում Հայտ-Պայմանագիրը համարվում է լուծված Բանկի կողմից փոփոխման ծանուցումը ուղարկելու 16-րդ օրը: Մինչ պայմանագրի գործողության դադարեցումը կողմերը կատարում են միմյանց հանդեպ առկա պարտավորությունները:

9.4. Բանկի և/կամ Վճարային համակարգի անդամ հանդիսացող այլ բանկերի կողմից հիմնավոր պատճառով պահանջվող գործարքների անդորրագրերը Սպասարկման կետի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկ չներկայացնելու դեպքում, տվյալ գործարքները Բանկի կողմից կհամարվեն անվավեր:

9.5. Անհրաժեշտության դեպքում կատարում է POS տերմինալների տեխնիկական սպասարկում՝ ծրագրային ապահովման թարմացման նպատակով

9.6. Անհրաժեշտության դեպքում Սպասարկման կետին տրամադրում է խորհրդատվություն քարտերով սպասարկելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և քարտապաններին պատշաճ սպասարկում իրականացնելու վերաբերյալ:

9.7. Սպասարկման կետին տրամադրված POS տերմինալներով կատարվող գործարքները Բանկը իրավասու է ժամանակավորապես կասեցնել, եթե սույն Պայմանների 12.3 (հաշվետեր հաճախորդների համար)/13.3 (ոչ հաշվետեր հաճախորդների համար) կետով նախատեսված միջնորդավճարի մասով առկա է պարտք, ինչպես

նաև Սպասարկման կետը չի իրականացնում սույն Պայմանների 12.6 (հաշվետեր հաճախորդների համար) / 13.6 (ոչ հաշվետեր հաճախորդների համար) կետի պահանջը:

9.8. Տրամադրված POS տերմինալը/ները հետ պահանջել, եթե 1 ամիս և ավել չի շահագործվել, կամ շահագործման արդյունքում չի ապահովել ամսական շարժ՝ 300.000 ՀՀ դրամի չափով: Սույն կետի ուժով հաճախորդը պարտավորվում է հետ վերադարձնել POS տերմինալը/ները Բանկի առաջին իսկ գրավոր պահանջով:

ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ ԴՐԱՄՈՎ ԻՆՏԵՐՆԵՏ -ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

10.1. Սպասարկման կետից, Քարտերով կատարված գործառնությունների դիմաց, գանձել ծառայության համար նախատեսված միջնորդավճարը:

10.2. Փոփոխել Քարտերի սպասարկման դիմաց գանձվող միջնորդավճարը, այդ մասին գրավոր կամ Սպասարկման կետի հայտում նշված էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Սպասարկման կետին առնվազն 15 օրացուցային օր առաջ, նշելով նոր միջնորդավճարի չափը: Եթե սպասարկման կետը չի առարկում 15 օրացուցային օրվա ընթացքում, ապա պայմանները համարվում են ընդունված և ուժի մեջ են մտնում 16-րդ օրվանից ժամը 12:00-ից սկսած:

10.3 Սպասարկման կետի կողմից նոր միջնորդավճարի չափին համաձայն չլինելու դեպքում Հայտ-Պայմանագիրը համարվում է լուծված Բանկի կողմից փոփոխման ծանուցումը ուղարկելու 16-րդ օրը: Մինչ պայմանագրի գործողության դադարեցումը կողմերը կատարում են միմյանց հանդեպ առկա պարտավորությունները:

10.4. Բանկի և/կամ Վճարային համակարգի անդամ հանդիսացող այլ բանկերի կողմից հիմնավոր պատճառով պահանջվող գործարքների էլեկտրոնային անդորրագրերը Սպասարկման կետի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկին չտրամադրելու դեպքում, տվյալ գործարքները Բանկի կողմից կհամարվեն անվավեր:

10.5. Սպասարկման կետի հայտում նշված հաշվից անակնկալ գանձել հերթական հաշվեգրումներից (իսկ միջոցների անբավարար լինելու պարագայում գանձել Բանկում բացված մյուս հաշվարկային հաշիվների միջոցներից, կամ պահանջել Սպասարկման կետից համալրում Բանկի գրավոր պահանջով) հետևյալ գումարները.

- Հետվճարման գործարքներ,
- Չեղարկման գործարքներ,
- Անվավեր գործարքներ,

10.6. Անհրաժեշտության դեպքում կատարում է տեխնիկական սպասարկում՝ ծրագրային ապահովման թարմացման նպատակով:

10.7. Բանկը իրավասու է ժամանակավորապես կասեցնել Ինտերնետ էքվայրինգ ծառայության մատուցումը, եթե սույն Պայմանների 12.3 (հաշվետեր հաճախորդների համար) /13.3 (ոչ հաշվետեր հաճախորդների համար) կետով նախատեսված միջնորդավճարի մասով առկա է պարտք, ինչպես նաև Սպասարկման կետը չի իրականացնում սույն Պայմանների 12.6 (հաշվետեր հաճախորդների համար) / 13.6 (ոչ հաշվետեր հաճախորդների համար) կետի պահանջը:

10.8. Միակողմանիորեն կասեցնել հավաստագրումների/քարտերի միջոցով գործարքների իրականացման հնարավորությունը 180 օրացուցային օրից ոչ ավել ժամկետով՝ հաճախորդին այդ մասին տեղեկացնելով և/կամ նախաձեռնել Հայտ-պայմանագրի լուծումը հետևյալ դեպքերում.

- Սպասարկման կետի մասին բացասական տեղեկատվության ստացման պարագայում՝ իրավասու պետական մարմինների և/կամ վճարային համակարգի կողմից, այդ թվում Սպասարկման կետի անօրինական գործունեության մեջ ներգրավված լինելու մասին,
- Սպասարկման կետի լուծարման, կամ Սպասարկման կետի սնանկ ճանաչման գործընթացի մեկնարկի առկայության պարագայում,
- Սպասարկման կետի կողմից պայմանների խախտման, այդ թվում վճարային քարտերի ռեկվիզիտների անօրինական օգտագործման պարագայում,
- Սպասարկման կետի կողմից իրականացված գործարքներ, որոնք ճանաչվել են անվավեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված գործունեության ծավալում, որը կարող է վնասել Բանկի համբավին:

10.9. Ջեղծարարությունների կանխարգելման նպատակով Բանկն իրավունք ունի կիրառել սահմանափակումներ՝ սահմանելով հավաստագրման անցկացման սահմանաչափեր:

ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՌԴ ՌՈՒԲԼՈՎ ԻՆՏԵՐՆԵՏ -ԷՔՎԱՅՐԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

11.1. Սպասարկման կետից, Քարտերով կատարված գործառնությունների դիմաց, գանձել ծառայության համար նախատեսված միջնորդավճարը:

11.2. Փոփոխել Քարտերի սպասարկման դիմաց գանձվող միջնորդավճարը, այդ մասին գրավոր կամ Սպասարկման կետի հայտում նշված էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Սպասարկման կետին առնվազն 15 օրացուցային օր առաջ, նշելով նոր միջնորդավճարի չափը: Եթե սպասարկման կետը չի առարկում 15 օրացուցային օրվա ընթացքում, ապա պայմանները համարվում են ընդունված և ուժի մեջ են մտնում 16-րդ օրվանից ժամը 12:00-ից սկսած:

11.3 Սպասարկման կետի կողմից նոր միջնորդավճարի չափին համաձայն չլինելու դեպքում Հայտ-Պայմանագիրը համարվում է լուծված Բանկի կողմից փոփոխման ծանուցումը ուղարկելու 16-րդ օրը: Մինչ պայմանագրի գործողության դադարեցումը կողմերը կատարում են միմյանց հանդեպ առկա պարտավորությունները:

11.4. Բանկի և/կամ Վճարային համակարգի անդամ հանդիսացող այլ բանկերի կողմից հիմնավոր պատճառով պահանջվող գործարքների էլեկտրոնային անդորրագրերը Սպասարկման կետի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկին չտրամադրելու դեպքում, տվյալ գործարքները Բանկի կողմից կհամարվեն անվավեր:

11.5. Սպասարկման կետի հայտում նշված հաշվից անակցեպտ գանձել հերթական հաշվեգրումներից (իսկ միջոցների անբավարար լինելու պարագայում գանձել Բանկում բացված մյուս հաշվարկային հաշիվների միջոցներից, կամ պահանջել Սպասարկման կետից համալրում Բանկի գրավոր պահանջով) հետևյալ գումարները.

- Հետվճարման գործարքներ,
- Չեղարկման գործարքներ,
- Անվավեր գործարքներ,

11.6. Անհրաժեշտության դեպքում կատարում է տեխնիկական սպասարկում՝ ծրագրային ապահովման թարմացման նպատակով:

11.7. Բանկը իրավասու է ժամանակավորապես կասեցնել Ինտերնետ էքվայրինգ ծառայության մատուցումը, եթե սույն Պայմանների 12.4. կետով նախատեսված միջնորդավճարի մասով առկա է պարտք, ինչպես նաև Սպասարկման կետը չի իրականացնում սույն Պայմանների 12.6. կետի պահանջը:

11.8. Միակողմանիորեն կասեցնել հավաստագրումների/քարտերի միջոցով գործարքների իրականացման հնարավորությունը 180 օրացուցային օրից ոչ ավել ժամկետով՝ այդ մասին Սպասարկման կետին տեղեկացնելով և/կամ նախաձեռնել պայմանագրի լուծումը հետևյալ դեպքերում.

- Սպասարկման կետի մասին բացասական տեղեկատվության ստացման պարագայում՝ իրավասու պետական մարմինների և/կամ վճարային համակարգի կողմից, այդ թվում Սպասարկման կետի անօրինական գործունեության մեջ ներգրավված լինելու մասին,
- Սպասարկման կետի լուծարման, կամ Սպասարկման կետի սնանկ ճանաչման գործընթացի մեկնարկի առկայության պարագայում,
- Սպասարկման կետի կողմից պայմանների խախտման, այդ թվում վճարային քարտերի ռեկվիզիտների անօրինական օգտագործման պարագայում,
- Սպասարկման կետի կողմից իրականացված գործարքներ, որոնք ճանաչվել են անվավեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված գործունեության ծավալում, որը կարող է վնասել Բանկի համբավին:
- Սպասարկման կետի կողմից սույն Պայմանների 6.16 կետի պայմանների խախտման դեպքում

11.9. Չեղծարարությունների կանխարգելման նպատակով Բանկն իրավունք ունի կիրառել սահմանափակումներ՝ սահմանելով հավաստագրման անցկացման սահմանաչափեր:

ՀԱՇՎԵՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

12.1. Կողմերը պատասխանատվություն են կրում միմյանց տրամադրած տեղեկությունների ճշտության համար:

12.2. Բանկը երաշխավորում է ապրանքների և ծառայությունների դիմաց քարտերով վճարումների փոխհատուցումը Սպասարկման կետին, որոնք կատարվել են համաձայն սույն Պայմանների և ստացել են հավաստագրման կոդ:

12.3. Եթե Բանկի և Սպասարկման կետի փոխհաշվարկի արժույթը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դրամը, Բանկի կողմից մատուցված ծառայության միջնորդավճարը սահմանվում է 3%:

12.4. Եթե Բանկի և Սպասարկման կետի փոխհաշվարկի արժույթը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռուբլին, Բանկի կողմից մատուցված ծառայության միջնորդավճարը սահմանվում է 2%:

12.5. Բանկը անդորրագրի կամ գործառնությանը վերաբերող էլեկտրոնային տվյալների ստացման օրվանից հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում, Սպասարկման կետի կողմից իրականացված գործարքների գումարը/ները մուտքագրում է Հայտ–Պայմանագրում նշված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում առկա Սպասարկման կետի հաշվին/(ներին):

Սույն կետի ուժով Սպասարկման կետը տալիս է Բանկին իր անհետկանչելի հանձնարարականը միջնորդավճարի գումարը/ները, Բանկի կողմից Սպասարկման կետի կողմից իրականացված գործարքների գումարի/ների մուտքագրման օրը/պահին, իր հաշվից անակցեպտ կարգով գանձելու համար:

12.6. Վճարային համակարգի անդամ հանդիսացող այլ բանկերի կողմից հետգանձում ստանալու, ինչպես նաև հաճախորդների կողմից ներկայացված դիմում-բողոքները բավարարվելու դեպքում Բանկը անակցեպտ

եղանակով գանձում է Սպասարկման կետի Բանկում գործող հաշվարկային հաշվից/հաշիվներից գործարքի գումարն ամբողջությամբ (առանց նախկինում գանձված միջնորդավճարի), եթե հաշվարկային հաշվին/հաշիվներին գումարը բավարարում է: Սույն կետի ուժով Սպասարկման կետը տալիս է Բանկին անհետևանչելի հանձնարարական նշված գումարները իր հաշվից անակցեպտ կարգով գանձելու մասով:

12.7. Սպասարկման կետի հաշվարկային հաշվին/հաշիվներին սույն Պայմանների 12.6 կետով նախատեսված դեպքերով, համապատասխան գումարը գանձում կատարելու համար չբավականացնելու կամ Սպասարկման կետի հաշվի համարը այլ բանկում լինելու դեպքերում, Բանկը պաշտոնական գրությամբ կարող է պահանջել Սպասարկման կետից հետգանձման գումարի չափով համալրել հաշվարկային հաշիվը/կամ մուտքագրել գրության մեջ նշված հաշվին/Սպասարկման կետի հաշվի համարը այլ բանկում լինելու դեպքում/, գրությունը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

12.8. Սպասարկման կետի կողմից սույն Պայմանների 12.7 կետով նախատեսված պարտավորության խախտման, ինչպես նաև Պայմանների 12.3 կամ 12.4 (կախված ծառայության արժույթից) կետով նախատեսված միջնորդավճարի մասով պարտքի առաջացման և չվճարման դեպքում Սպասարկման կետը Բանկի պահանջով վճարում է տույժ օրական, չվճարված գումարի 0.1% չափով:

12.9. Բանկի կողմից Սպասարկման կետին դրամական միջոցների հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է որպես գործարքների ընդհանուր գումար՝ ինչպես նշված է էլեկտրոնային մատյանի փաստաթղթերում՝ հաշվանցելով հետվճարի, չեղարկման, անվավեր ճանաչված գործարքների և տուգանքների գումարները:

12.10. Այն դեպքում, երբ Սպասարկման կետը նախաձեռնում է գործարքի չեղարկման գործընթաց, որի մասով Բանկն արդեն կատարել է դրամական միջոցների փոխանցում, չեղարկման գործարքի գումարը գանձվում է հաջորդող փոխանցման միջոցներից:

ՈՉ ՀԱՇՎԵՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

13.1. Կողմերը պատասխանատվություն են կրում միմյանց տրամադրած տեղեկությունների ճշտության համար:

13.2. Բանկը երաշխավորում է ապրանքների և ծառայությունների դիմաց քարտերով վճարումների փոխհատուցումը Սպասարկման կետին, որոնք կատարվել են համաձայն սույն Պայմանների և ստացել են հավաստագրման կոդ:

13.3. Բանկի կողմից մատուցված ծառայության միջնորդավճար է սահմանվում 3.5%:

13.4. Բանկը անդորրագրի կամ գործառնությանը վերաբերող էլեկտրոնային տվյալների ստացման օրվանից հետո, Սպասարկման կետի կողմից իրականացված գործարքների գումարը/ները մուտքագրում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում առկա Սպասարկման կետի համար բացված տարանցիկ հաշին, հաշվանցում 13.3. կետով նախատեսված Բանկի միջնորդավճարի գումարը և 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում գումարը (առանց միջնորդավճարի) փոխանցում է Հայտ-Պայմանագրում նշված Սպասարկման կետի այլ բանկում առկա հաշվին/(ներին),

13.5. Վճարային համակարգի անդամ հանդիսացող այլ բանկերի կողմից հետգանձում ստանալու, ինչպես նաև հաճախորդների կողմից ներկայացված դիմում- բողոքները բավարարվելու դեպքում Բանկը անակցեպտ եղանակով գանձում է Սպասարկման կետի Բանկում գործող հաշվարկային հաշվից/հաշիվներից գործարքի գումարն ամբողջությամբ (առանց նախկինում գանձված միջնորդավճարի), եթե հաշվարկային հաշվին/հաշիվներին գումարը բավարարում է: Սույն կետի ուժով Սպասարկման կետը տալիս է Բանկին անհետևանչելի հանձնարարական նշված գումարները իր հաշվից անակցեպտ կարգով գանձելու մասով:

13.6. Սպասարկման կետի հաշվարկային հաշվին/հաշիվներին սույն Պայմանների 13.5. կետով նախատեսված դեպքերով, համապատասխան գումարը գանձում կատարելու համար չբավականացնելու կամ Սպասարկման կետի հաշվի համարը այլ բանկում լինելու դեպքերում, Բանկը պաշտոնական գրությամբ

կարող է պահանջել Սպասարկման կետից հետգանձման գումարի չափով համալրել հաշվարկային հաշիվը/կամ մուտքագրել գրության մեջ նշված հաշվին/Սպասարկման կետի հաշվի համարը այլ բանկում լինելու դեպքում/, գրությունը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

13.7. Սպասարկման կետի կողմից սույն Պայմանների 13.6 կետով նախատեսված պարտավորության խախտման, ինչպես նաև Պայմանների 13.3. կետով նախատեսված միջնորդավճարի մասով պարտքի առաջացման և չվճարման դեպքում Սպասարկման կետը Բանկի պահանջով վճարում է տույժ օրական, չվճարված գումարի 0.1% չափով:

13.8. Բանկի և Սպասարկման կետի փոխհաշվարկի արժույթը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դրամը:

13.9. Բանկի կողմից Սպասարկման կետին դրամական միջոցների հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է որպես գործարքների ընդհանուր գումար՝ ինչպես նշված է էլեկտրոնային մատյանի փաստաթղթերում՝ հաշվանցելով հետվճարի, չեղարկման, անվավեր ճանաչված գործարքների և տուգանքների գումարները:

13.10. Այն դեպքում, երբ Սպասարկման կետը նախաձեռնում է գործարքի չեղարկման գործընթաց, որի մասով Բանկն արդեն կատարել է դրամական միջոցների փոխանցում, չեղարկման գործարքի գումարը գանձվում է հաջորդող փոխանցման միջոցներից:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

14.1. Բանկը պատասխանատվություն չի կրում Սպասարկման կետի կողմից առաջարկվող ապրանքի որակի, տրամադրման ժամկետների և ցանկացած այլ պայմանների համար և չի դիտարկում քարտատերերի համապատասխան բողոքարկումները:
14.2. Սպասարկման կետը պարտավորվում է իր վրա վերցնել անվավեր գործարքների հետ կապված վիճելի հարցերի կարգավորմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, և ցուցաբերել իր միջնորդությունը վճարային համակարգի և/կամ էմիտենտների կողմից նման գործարքների մասով ստացված բողոքարկումների հետ աշխատանքների հարցում:
14.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Սպասարկման կետի հնարավոր վնասների համար՝ կապված պայմաններով նախատեսված դեպքերում գործարքների և/կամ հավաստագրման դադարեցման հետ:
14.4. Բանկը պատասխանատվություն չի կրում քարտատերերի և Սպասարկման կետերի միջև առաջացած վեճերի և տարաձայնությունների համար, որոնք չեն հանդիսանում սույն Պայմանների կետ:
14.5. Սպասարկման կետի նախաձեռնությամբ իրականացված փոխանցումների հետվճարի ֆինանսական պատասխանատվությունը կրում է Սպասարկման կետը:
14.6. Սպասարկման կետը սույն Պայմանների 6.14 կետը խախտելու դեպքում պատասխանատվություն է կրում ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված կարգով:
14.7. Բանկը պատասխանատվություն չի կրում Էկվայրինգի սույն Պայմաններով նախատեսված պարտականությունների ամբողջական կամ մասամբ չկատարման համար, եթե դա ի հայտ է եկել Բանկի հսկողության սահմաններից դուրս ծրագրային ապահովման և կապուղիների աշխատանքի խափանման հետևանքով:

ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

15.1. Սույն Պայմաններով սահմանված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում, կողմերը ազատվում են պատասխանատվությունից այն դեպքերում, երբ պարտավորությունների չկատարումը հետևանք է՝

- պետության, տեղական իշխանության մարմինների կողմից արգելող միջոցառումների

-հայտարարված կամ չհայտարարված պատերազմների, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների և հեղափոխությունների

- տարերային աղետների՝ փոթորիկների, ցիկլոնների, երկրաշարժերի, ջրհեղեղների, ինչպես նաև պայթյունների և հրդեհների

- այլ ֆորս-մաժորային հանգամանքներ

15.2. Կողմը, որի համար ստեղծվել են ֆորս-մաժորային հանգամանքներ սույն Պայմաններով նախատեսված պարտականությունները կատարելու համար, պարտավոր է 10 (տաս) օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել մյուս կողմին խանգարող հանգամանքների առաջացման մասին:

15.3. Փաստերը, վերը նշված հանգամանքների առկայության մասին, պետք է հաստատվեն իրավասու մարմինների կողմից: Այն դեպքում երբ մի կողմը չի տեղեկացնում մյուս կողմին այս հանգամանքների առաջացման մասին, ապա համապատասխան կողմը զրկվում է ֆորս-մաժոր հանգամանքների վրա հղվելու իրավունքից, որպես իր պարտականությունների չկատարում:

15.4. Եթե վերը նշված հանգամանքները տևում են ավելի քան երեք ամիս, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի դադարեցնել Հայտ-պայմանագրի գործնեությունը, այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.1. Մինչ Հայտ-պայմանագրի գործողության դադարեցումը կողմերը կատարում են միմյանց հանդեպ առկա պարտավորությունները:

16.2 Հայտ-Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ցանկացած դեպքում Բանկի սեփականությունը հանդիսացող POS տերմինալը, սարքին վիճակում վերադարձվում է Բանկին՝ հակառակ դեպքում Բանկն առաջնորդվում է սույն Պայմանների 4.7 կետով:

16.3. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է անմիջապես տեղեկացնել մյուս կողմին հասցեի, հեռախոսի և հաշվեհամարի փոփոխությունների մասին:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԵՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կողմերը, պարտավորվում են անձամբ կամ միջնորդի միջոցով որևէ անձի չվճարել, չառաջարկել և/կամ չընդունել կամ թույլ չտալ վճարել/ընդունել կաշառք/ապօրինի վարձատրություն՝ դրամային միջոցների, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեքների տեսքով, որևէ անհամաչափ առավելություն ստանձնելու կամ այլ անհամաչափ նպատակների համար այդ անձանց գործողությունների կամ որոշումների վրա ազդեցություն գործելու նպատակով,

Կողմերը պարտավորվում են սույն փաստաթղթով նախատեսված պահանջների խախտման կամ հնարավոր խախտման մասին կասկածներ ունենալու դեպքում գրավոր կերպով միմյանց ծանուցել այդ մասին: Ծանուցումն ուղարկելու պահից սկսած Կողմն իրավունք ունի դադարեցնել իր պարտավորությունների կատարումը մինչև մյուս Կողմից գրավոր հիմնավոր հերքում ստանալու պահը: Ծանուցումը պետք է լինի հավաստի, հիմնված այնպիսի փաստերի վրա, որոնք ապացուցում են, որ տեղի է ունենում կամ տեղի է ունեցել սույն գլխով նախատեսված պահանջների խախտում,

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Հայտ-Պայմանագիրը, եթե մյուս Կողմը խախտում է սույն կետով նախատեսված պահանջները՝ այդ մասին գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին 10 օր առաջ: Այս հիմքով Հայտ-Պայմանագիրը լուծելիս Կողմն իրավունք ունի պահանջել մյուս Կողմից հատուցել իրեն հասցված փաստացի վնասները: